

Կապսուլային սուրճ - Capsule Coffee



Հայաստանի հանրապետությունում կապսուլային սուրճերի առաջատար տեղական արտադրողը հանդիսանում է «Փարիզյան Սուրճ» ընկերությունը, որը առաջարկում է ոչ միայն կապսուլային սուրճ, այլ նաև աշխարհի լավագույն պլանտացիաներից ներկրված սուրճերի լայն տեսականի:

Կապսուլային սուրճը (Capsule Coffee) բնական բովված և աղացած, պրեսավորված սուրճի փոքր չափաքանակ է (5-6 գրամ սովորաբար) հերմետիկ կերպով փաթեթավարված կապսուլայի մեջ: Այդպիսի մեկ պարկուճը նախատեսված է մեկ բաժին սուրճ պատրաստելու համար, այսինքն, ըստ էության, հանդիսանում է մեկանգամյա օգտագործման: Սուրճով լի կապսուլան տեղադրվում է համապատասխան Նեսպրեսո (Nespresso) սրճեփի մեջ, և կոճակի սեղմումից հետո այն բացվում է երկու կողմերից տաք օդի հզոր հոսքի միջոցով: Այնուհետև սուրճը խառնվում է բարձր ճնշման տակ հոսող ջրի հետ: Այսպիսով, ստանում ենք մի բաժակ չափազանց համեղ սուրճ՝ նվազագույն ջանքեր գործադրելով:

Մանրայի արժեք

Շատ մարդիք, ովքեր հոգ են տանում իրենց առողջության մասին, մտահոգված են այն մասին, թե որքան կալորիա է պարունակում 1 բաժին կապսուլային սուրճը: Կապսուլային սուրճի 100 գրամը պարունակում է մոտ 220 Կ կալ: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ որ մեկ բաժին սուրճը պարունակում է 5-6 գրամ սուրճ, ապա մեկ բաժնի կալորականությունը կկազմի 36-44 Կ Կալ:

Կապսուլային սուրճի առավելությունները

Համային հատկանիշները միանշանակ կարելի է դասել առավելությունների շարքին : Դա կապված է այն բանի հետ, որ կապսուլայի մեջ գտնվող աղացած սուրճը գտնվում է հետումետիկ փաթեթավորման մեջ, ինչի շնորհիվ պահպանում է իր յուրօրինակ համար և բույրը : Իսկ մեզ քաջ հայտնի աղացած սուրճը շատ ավելի արագ է կորցնում իր համային հատկանիշներ, քանի որ անհամեմատ ավելի շատ է շփվում օդի հետ :

Պատրաստման ժամանակահատվածը ևս մեկ չափազանց մեծ առավելություն է այն մարդկանց համար, ովքեր չեն սիրում իրենց ժամանակը ծխսել ինչ որ բան պատրաստելու վրա : Ընդամենը 2 շարժում՝ կապսուլայի տեղադրում սրճեփի մեջ և կոճակի մեկ հպում և վերջ, անուշաբույր սուրճը պատրաստ է :

Պատրաստման գործընթացի մաքրություն և դյուրություն : Կարիք չկա հավելյալ ջանքեր գործադրել, սրճեփի տարբեր տարրերի լվացում կատարել. սրճեթը ինքն է այդ ամենը կատարում : Ուղղակի պատրաստումից հետո դեն նետեք օգտագործված կապսուլան և վերջ:

Կարևոր նախապայման

Ձեզ դուր եկած կապսուլաները Դուք կարող եք օգտագործել միայն համապատասխան կապսուլաների համար նախատեսված սրճեփների հետ :



«Փարիզյան սուրճ» ընկերությունը Ձեզ է առաջարկում Nespresso De'Longhi ֆիրմայի EN 80 մոդելի կապսուլային սրճեփ: Վերջինիս ձեռք բերման պայմաններին ծանոթանալու համար կարող եք ընթերցել մեր հետագա հրատարակումները:

Շատ կարևոր է ուշադրություն դարձնել ոչ միայն խտանյութի բաղադրությանը , այլ նաև այն նյութերին, որոնցից պատրաստված է հենց ինքը կապսուլան, չէ որ սուրճի պատրաստման գործընթացի ժամանակ կապսուլան ենթարկվում է տաք օդի և ջրի մեծ ճնշման ազդեցության, և հետևաբար պետք է բացառվի մանրագույն էլեմենտների հայտնվելը ըմպելիքի մեջ :

«Փարիզյան Սուրճ»-ի կողմից առաջարկվող կապսուլաները պատրաստված են պոլիմերից, և անցել են բոլոր հնարավոր լաբորատոր փորձարկումները :

